

ՅԼ. Մուրվալյան

ՀԱԲԵՍԱԿԱՆ (ՔԱՐԹԱԿԱՆ) ՄԱՍՆԻԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(Համառոտ տեղեկություններ և փաստեր մասնիկների մասին)

Ն. Մառը, որպես լեզվի նոր ուսմունքի հիմնադիր, սկզբից էլ հակադրվելով հնդեվրոպականներին՝ ապացուցում է, որ հայերենը մաքուր հնդեվրոպական լեզու չէ։ Նա իր բազմաթիվ աշխատությունների մեջ այս կամ այն կապակցությամբ և այս կամ այն չափով տալիս է հայոց լեզվի այն հսկայական տարրերը, որոնք ծաղուծ են հարեթական (նախա-արիական), այն է՝ քարեթական լեզուներից, հատկապես վրացերենից, ճաներենից, մեգրերենից, սվաներենից և այլն։ Լեզվական այս կարգի ընդհանրություններն, իրոք, այնքան շատ են ու բազմազան, որ Ն. Մառը բազմիցս հայոց և վրաց լեզուները պարզապես հայտարարել է ազգակից լեզուներ¹։

Հայոց և վրաց լեզուների իրար «ազգակից» լինելը (եթե, իհարկե, փաստական մատերիալից ելնենք) բոլորովին էլ տարօրինակ չէ, այնպես, ինչպես տարօրինակ չէ հայոց և վրաց լեզուների տարրեր լեզվախմբերի պատկանելը, որոնք իրենց բնական առանձնահատկությունների հետ միասին ունեն նաև բազմաթիվ ընդհանրություններ։ Այդ ընդհանրությունները դալիս են, անշուշտ, դարերի խորքից, վաղագույն (նախա-արիական) շրջաններից, այն է՝ հարեթական (քարեթական) լեզուների փոխադարձ շփումներից, երկու տարրեր լեզվախմբերի ապրած բնական ներթափանցումներից ու խաչավորումներից և այլն։

Սրանք այնպիսի ընդհանրություններ են, որոնք բնականաբար առաջ են եկած տեղական հողի վրա, հատկապես այդ ընդհանրությունների մի մասն անցել է ինչպես նախորդ (մեռած), այնպես էլ հարևան (կենդանի) լեզուներից և պահպանվել հայոց ու վրաց լեզուներում, մի մասն էլ իրարից անցնելով՝ կազմել են, այսպես ասած, քարեթա-հայկական տարրեր։

Ուրիշ ոչ մի լեզու, հարևան լեզուներից ուրիշ ոչ մեկը (թեև ոչ հնդեվրոպական սիստեմի լեզուներից և ոչ մեկը) հայերենի հետ այնքան ընդհանուր լեզվատարրեր չունի, որքան քարեթական լեզուները, հատկապես վրացերենը։ Այս իսկ տեսակետից լեզվաբանի համար շատ կարևոր է վրա-

¹ Նախ՝ Միարանին (Գուլուստ Տեր-Մկրտչյանին) գրած նրա անտիպ նամակներից մեկում (որ վկայակոչում է պրոֆ. Ա. Արրահունյանը Երևանի Պետական համալսարանի Մառի անվան կարիքնոսում 1943 թ. կարգադրած, այժմ տպագրվող իր գեկուցման մեջ), ապա՝ նրա Վարդանի առակների ժողովածուի մեջ (էջ 526), որտեղ Ն. Մառը ընդգծում է վրացերենի լեզվական կապը հայերենի նախա-արիական շերտի հետ և հայերի ու վրացիների իրար նույնքան ազգակից ժողովուրդներ լինելը, որքան որ վրացիների ու մեգրերենի, և վերջապես՝ նույն նաև տարրեր արտահայտություն ճաներենի լեզվականության մեջ՝ «Армениты старой школы не усваивают фактического родства наисккого с грузинским...» (И. Марр, Грамматика чанского языка. С. Петербург, 1910, էջ X)։ և այլն։

ցերենի ուսումնասիրության գործը, մի լեզվի, որի հետ, ինչպես Ն. Մառն է ասում, իր նախա-արիական շերտով ազդակից է հայերենը։ Եվ ահա առաջինը Մառն է, որ փաստերի ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ զգում է այդ կարևորությունը։ Նա հիմք է դնում հայ-վրացականության։

Հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները (ձևա-իմաստային ընդհանրությունները) իրենց բազմազանությամբ հանդերձ (բայց նյութի ուսումնասիրության ու դասավորման), իմ կարծիքով, պետք է երկու հիմնական մասի բաժանել, առաջինը՝ ընդհանուր մասնիկները, որոնց մեջ տեղ կդնենք բուն մասնիկները, ածանցները, հոլովանիշները և այլն, իսկ երկրորդը՝ ընդհանուր բառերը կամ բառարմատները, որոնք ծագումով նույն են կամ մի ընդհանուր աղբյուրից են գալիս։ [Սա մի առանձին թեմա է (մեծ թեմա), որի վրա աշխատում եմ այժմ։]

Առաջին մասի համեմատությունից պարզվում է, որ երկու լեզվի ընդհանուր մասնիկների հիմնական իմաստը նախապես կապված է եղել մեծ մասամբ անունների հավարական կամ հոգնակի գաղափարի հետ։ Հետագայում այդ մասնիկներն իմաստային տարրեր երանդավորումներ են ստացել։ Այդ պատճառով էլ նրանք այսօր հանդես են գալիս ոչ միայն սկզբնական հոգնակերտական իմաստով, այլև երկրորդական—բառաստեղծական իմաստով։ Այս պրոցեսում է ահա, որ անունների հոգնակի մասնիկները երկու լեզվում էլ, ինչպես պարզվում է, անուններից անցնում են բայերին՝ նրանց տալով իմաստի տարրեր երանդներ։

Անուններից ծագող այդ հոգնակի մասնիկները բայաձևերի մեջ էլ, նախ և առաջ, կապվում են անմիջականորեն օբյեկտի և սուբյեկտի, որպես անունների (առարկաների), հոգնակիությամբ հետ, այնուհետև բայի ցույց տված գործողության կրկնության կամ բազմապատկության հետ, տալով գործողության տևականության կամ ինտենսիվության հետ... և այլն։ Այսպիսով՝ անունների հոգնակի մասնիկները անունների հոգնակի (կամ հավաքական) կոնկրետ գաղափարից բայաձևերի մեջ անցնում են վերացական գաղափարի, հաճախ հոգնակերտական գաղափարից, այսպես ասած, բայաստեղծական գաղափարի¹։

Ա

Տարրեր բառերի և մասնիկների մեջ, երբ քարթական լեզուներում զրսեորված է լինում ընդհանրապես ձայնից ը (ռ), հայերենում զրան համապատասխանում է սովորաբար խուլ տ շնչյունը, այսպ. օր.՝ վրց. յՐԸ-Օ (կոդ-ի) = հյ. կոտ (= «չափի մի տեսակը»), վրց. ՅՐԸ-Օ (գորդ-ի) = հյ. գորտ, վրց. յՐԸ-Յ (կոդ-վա) = հյ. (կոտ-որ-ել >) կտ-ր-ել, վրց. յՐԸ-Օ (կորդ-ի) = հյ. (կորդ > *կորտ >) կոշտ... և այլն։ Այս ձևով զրսեորված են նաև հետևյալ ածանցները՝ վրց. -ալո (-ադ), -ուլո (-ող), -լո (-դ) = հյ. -ալտ, -ուտ, -տ։

Մեզ այստեղ հետաքրքրում էն այս ածանցները, որոնք երկու լեզվի ձևա-իմաստային համարմեքները և ծագումով էլ տեղական մասնիկները

¹ Այս մասին դրած ունեմ «Հայերենի քայածանցները», ստուգաբանական ակնարկային հոդվածներում հարուստ նյութի վրա (2 մամուլ ծավալով, զեռ անտիպ)։

լինելով՝ մի ժամանակ արտահայտել են, անշուշտ, հոգնակի գաղափարը (որ զեռ այսօր էլ պահպանված է երկու լեզվի տարրեր բառաձևերում)։

Այս մասնիկները հայերենում հանդիպում են զուլիս նաև ուրիշ մասնիկների հետ բաղադրյալ ձևով, որոնցից ամենատարածվածը «ի» մասնիկն է, այսպես օր.¹ -աւո || -աւո+ի, -ուո || -ուո+ի, -աւ || -աւ+ի։

Այս մասնիկները (պարզ թե բաղադրյալ) հանդիպում են զուլիս թե տնունների և թե բայաձևերի մեջ և սովորաբար «շատի» գաղափար են արտահայտում։ Առաջինը՝ -աւո || -աւո+ի մասնիկը հաղթագեղ է պատահում տնունների մեջ՝ զրական հայերենում, օր.² արմ բառից ունենք՝ արմ-աւո || արմ-աւո+ի (≠ արմ-ըսի-ք՝ բարբառներում), մինչդեռ Ադուլիսի բարբառում՝ զա շատ սովորական է, ինչպ. օր.³ պըրըլ-աւի-ք պառաւիներ, զը-զըր-աւի-ք պապարներ, կը/սկ-ըր-աւի-ք գողգներ, ըըըկ-աւի-ք տառակներ, սըրմ-աւի-ք սերմներ... և այլն։ Այս հոգնակի մասնիկը՝ անուններից անցնելով բայերին (բայերի ձևափոխման ժամանակ), նույն հոգնակի (կամ շատի) գաղափարը շարունակում է արտահայտել նաև բայաձևերի մեջ՝ իմաստի որոշ երանգավորումներով (առարկայի հոգնակի գաղափարից անցնելով, այսպես ասած, բայի ցույց տված գործողության հոգնակի գաղափարին)։ Այսպիսի անցումը, որ, իմ կարծիքով, կատարվել է բայերի ձևափոխման ժամանակ, շատ բնորոշ է հայերենին և ցայտուն կերպով արտահայտված է նրա բայաձևերում (անունների հոգնակի ձևերի կողքին ենթադրվում են նույն «շատի» գաղափարն արտահայտող բայաձևեր՝ միևնույն ձևանիշներով), այսպես օր.⁴ Ադուլիսի բարբառում՝ *թք-աւո || *թք-աւո+ի (≠ շատ թուք) → *թք-աւո-ել (≠ թքոտել, շատ թքել), *ըշտ-աւո || *ըշտ-աւո+ի (≠ շատ ըշտիկներ) → *ըշտ-աւո-ել (≠ ըրշտոտել, մարմին շատ ըշտիկներ գոյանալ), այսպես նաև՝ *կար-աւո || *կար-աւո+ի → *կար-աւո-ել, *(թկ-) *թկ-աւո || *(թկ-) *թկ-աւո+ի → *(թկ-) *թկ-աւո-ել (≠ բողբոլին էլ ծեծել), *ծկծկ-աւո || *ծկծկ-աւո+ի → *ծկծկ-աւո-ել (≠ բողբոլն էլ ծակծկել), այլև (ընդհանրապես հայերենում)՝ *լիզ-աւո-ել (≠ շատ լիզել), *փշր-աւո-ել (≠ փշուր-փշուր անել), *խղր-աւո-ել (≠ շատ խղել), *խած-աւո-ել (≠ խածխածել)... և այլն։

Անունների մեջ, սակայն, նա մեծ մասամբ շատի գաղափար այլևս չի պահպանել, այլ տարրեր բառարմատներից գլխավորապես նորանոր բառաձևեր է ստեղծում՝ իմաստի տարրեր երանգավորումներով, որ հատուկ է սովորաբար հայերենի հոգնակի մասնիկներին (ինչպես օր.⁵ զըր. «ք» հոգնակի մասնիկը, որով «գիր» բառից նոր բառաձև է կազմվում՝ գիրք-ք, տարի-ք, բաժին-ք, բաժին-ք, խաղ-խաղ-ք, հուժ-հուժ-ք, կեր-կեր-ք «փտու-թյուն»... և այլն)։ Այսպես նաև՝ «ատ» մասնիկով «արմ» բառից արմ-աւո (|| արմ-աւո-ի-ք), հեղեղ-հեղեղ-աւո, հաստ-հաստ-աւո (նաև՝ հաստ-ել-հաստ-աւո-ել բայաձևերը), փուլ-փուլ-աւո (-ակ), խոր-խոր-խոր-աւո, բաց-բաց-աւո, տերե-տերե-աւո (≠ խորի մի տեսակն է)... և այլն։⁶

¹ Տե՛ս՝ Հ. Աճառյան, Քննություն Ադուլիսի բարբառի, Երևան, 1933, էջ 177—183։

² Ի՛նչ միայն այս մասնիկը, այլև՝ անունների -ոս || -ոս+ի, -տ || -տ+ի և ուրիշ շատ հոգնակի մասնիկները) անուններից, իմ կարծիքով, անցել են բայաձևերի մեջ (գերջիններիս ձևափոխման ժամանակ)։ Նման երևույթի կա նաև քարթական լեզուներում (վրացերենում, սվաներենում և այլն)։ Այս մասին զբաղ ունեւ Վալերենի բայաձևանցները ստուգաբանական աշխարհ (Գեո անտիպ)։

³ Այս «ատ» մասնիկը չպետք է շփոթել «հատ» բառից ստացված «ատ» ածանցի հետ

իմաստը:—Այս նույն ածանցը կարելի է տեսնել նաև ուրիշ լեզուներում: Ի միջի այլոց, հունարենում էլ, ըստ Երևութիքի, նույն երբեմնի հավաքական բառածանցն է, որ այս կամ այն չափով պահպանված է որոշ բառաձևերում: Ինչպ. օր.¹ γει-αμι-αμι (—բեղ-եր-ավոր), βολε-αμι-αμι (= մազմզ-ոտ, փրչ-ոտ), χο-αμι-αμι (= փոփոխ-ավոր, ցցուն-ավոր)։... Ե այն [այս բանի վրա, այլ կապակցությամբ, ուշադրություն հրավիրեց ակադ. Ղափանցյանը]:

Այս նույն ածանցը ավելի շատ առաժամված է վրացերենում (նույն հոգնա-բառասանգծական դերով), այսպես օր.² վրց. տავ-ո (թավ-ի = պլուխ) բառից՝ տავ-օր-ո (թավ-ադ-ի = պլխ-անի, դիխ-ավոր՝ իշխան), ցցո-ո (փեր-ի = դույն) բառից՝ ցցո-օր-ո (փեր-ադ-ի = դուն-ավոր, պույնգպույն), ինչպես նաև՝ վրց. տան-ի «մարմին», հասակ՝ բառից՝ տան-ադ-ի «մարմին-եղ, բարձրահասակ», պուր-ի «հաց» բառից՝ պուր-ադ-ի «հաց-ով, առաքածուն», հյուրասեր, պուլ-ի «սիրտ» բառից՝ պուլ-ադ-ի «սրտ-ոտ», թվալ-ի «աչք» բառից՝ թվալ-ադ-ի,³ «աչ-եղ, տեսքով», ծվ-ա «այր-ել, խորովել» բառից՝ մ-ծվ-ադ-ի «խորով-ած»։... և այլն:

Այս || տալի մասնիկի նման՝ անուններից բայերին են անցել, իմ կարծիքով, նաև -ալ || -ուլի կամ -ալ || տի մասնիկները, որոնք նմանապես հոգնակի (կամ հավաքական) գաղափար են արտահայտել ինչպես անունների, այնպես էլ բայաձևերի մեջ (վերջիններին մեջ, սակայն, սովորաբար իմաստի որոշ երանգավորումներ ստանալով): Նույն անցումով ստացված են, անշուշտ, այսպես օր.⁴ *պատառ-ալ || *պատառ-ալի — պատառ-ալի || պատառ-ալի (— «պատառ-պատառ անել»), *հնձ-ալ || *հնձ-ալի — հնձ-ալի-ել (— «բոլոր արտերն էլ հնձել»), *վառ-ալ || *վառ-ալի — վառ-ալի-ել (բոլորն էլ վառել), *բեկ-ալ || *բեկ-ալի — բեկ-ալի-ել (— չորս կողմից կտրտել), այլև (ժողովրդական լեզուներում)՝ կով-ալ-ել (— «խրար հետ կսվել»), ժողով-ալ-ել, ցատկ-ալ-ել, փախչ-ալ-ել (— «այս ու այն կողմ փախչել»), փնտր-ալ-ել (— «ամեն կողմ փնտրել»), պար-ալ-ել (— «շատ որոնել»)։... և այլն:

Սրանց ձևա-իմաստային համարմեքները վրացերենում, իմ կարծիքով, -ալ (-ալ) և -ալ (-ալ) մասնիկներն են, որոնք հանդիս են դալիս նմանապես որոշ կարգի բայաձևերում (հատկապես այնպիսի բայաձևերում, որոնք ցույց են տալիս սկսված ու դեռ շարունակվող գործողություն):

Այս տալի, ինչպես նաև՝ ալ || ալի և ալ || ալի հոգնակի մասնիկներն անուններից անցնելով բայերին՝ նախ և առաջ պետք է ցույց տային սուր-

Ինչպ. օր.¹ *դիխ-ա-միս-ել > դիխ-ալ-ել, *հոր-ա-միս-ել > հոր-ալ-ել, *պուչ-ա-միս > պուչ-ալ-ել, *կան-ա-միս > կան-ալ-ել... և այլն:

² Կա նաև վրց. թվալ-եղ-ի «աչ-ուլ, աչ-անի» բառաձևը, սրտեղ -օլ (-ալ) մասնիկի տեղ հանդես է եկած նրա -օլ (-եղ) ձևա-իմաստային փոփոխակը: Այս, ըստ երևութի, երկակի (հավաքական) թվի գաղափար է արտահայտել վրացերենում. սրտ նման նաև՝ վրց. կար-եղ-ի «դու-ուլ, դու-ալ», մախլ-եղ-ի «ծնկ-ուլ, ծնկ-անի», ծառք-եղ-ի «բնք-ուլ, ունք-անի», այլև՝ փեսա-եղ-ի «սրմ-ալ-ք», արմատ-ալ-ք, քառք-եղ-ի «խաչ-ալ-ք», խառ-եղ-ի, պատկեր-ալ-ք, շոտ-եղ-ի «ալ-ալ-ք», ճյուղ-ալ-ք... և այլն:

³ Այստեղ, ինչպես տեսնում ենք, վրց. -օլ (-ալ) մասնիկին, որ պետք է փոխարիներ հայերենում նրա ձևա-իմաստային -ալ համարմեքը, դադարեց է -ալ մասնիկը (վրց. մ-ծվ-ալ-ի = հյ. խորով-ած): Ուստի, իմ կարծիքով, -ալ մասնիկի ձևա-իմաստային հետադա փոփոխակն է, որ պատահում է հայերենում: Ինչպ. օր.⁴ «խավ» բառից՝ խավ-արալ || խավ-արալ (— վրց. խավ-ել) = «թավա, աղվամուղոտ», խալալ || խալալ, ալ-ալ-ել || ծա-ծալ-ել... և այլն:

յեկտի կամ օբյեկտի, որպես անունների (առարկաների), հոգնակի կամ շատ լինելը (ինչպես այդ անունների մեջ է սովորաբար), այնուհետև՝ սրանք պետք է ցույց տային գործողության կատարվելը մի օբյեկտի շատ մասերում կամ սուբյեկտի գործողության կրկնությունը (բազմապատկումը), որից է, վերջապես, գործողության տեսականությունը (կամ ինտենսիվությունը)։

Այսպիսով, իմաստային այս անցումները (առաջինից երկրորդը և երրորդը) մեկ տանում են առարկաների սկզբնական հոգնակի կոնկրետ գաղափարից դեպի (բայի ցույց տված) գործողություն, այսպես ասած, հոգնակիության վերացական գաղափարը (այն է՝ գործողության նախ՝ կրկնությունը և ապա՝ տեսականությունը)։ Ուրեմն, բայի արտահայտած գործողության տեսականության գաղափարը ծաղուժ է, անշուշտ, անունների (առարկաների) հոգնակի կոնկրետ գաղափարից (շնորհիվ նրանց հետ գրանորվող հոգնակի կամ հավաքական մասնիկների, որոնք, ինչպես արդեն տեսցի, անուններից անցել են բայերին՝ ձևա-իմաստային որոշ երանգավորումներով)։

Իմաստի այս վերջին երանգավորումով է ահա, որ հյ. ուո գտի կամ տ || տի հոգնակի մասնիկների ձևա-իմաստային երբեմնի համարժեքները -ոց (-ոդ) և -ը (-դ) մասնիկները վրացերենում հանդես են գալիս որոշ կարգի բայաձևերում։ Բոլոր դեպքերում էլ սրանք ցույց են տալիս բայի արտահայտած գործողության տեսականությունը (և կամ միառժամանակ կրկնությունը)։ Այսպես օր.՝ վրց. օ-ցեցծ-ոց-օ (ա-ենթեր-ոդ-ա «վառվում էր, կվառվիր») բայաձևը շնորհիվ -ոց (-ոդ) մասնիկի՝ ցույց է տալիս, որ վառվելու գործողությունն սկսված, բայց վերջացած չէ. նա (այդ գործողությունը) տևում է անցյալում շարունակաբար, հաճախ նաև ընդհատ-ընդհատ՝ շղթայի սոսսսոո օղակների պես։

Այսպիսի բայաձևերից են նաև վրց. ա-ծիթղ-եր-աղ-ա «կարմրում էր, կկարմրեր», գա-իչիթ-օդ-ա «բացվում էր, կբացվիր», չա-քերթ-օդ-ա «հանդիսում էր, կհանդիս», դա-լիվ-դ-ա «խմում էր, կխմիր», դա-ծեր-դ-ա «գրում էր, կգրեր», նախուրթ-դ-ա «տեսնում էր, կտեսներ», շոուրթ-վ-ա «ճարում էր, կճարեր», պոուրթ-վ-ա «ստանում էր, կստաներ»... և այլն։

Այստեղ (բոլոր դեպքերում էլ), ինչպես տեսնում ենք, գործողությունն սկսված է և շարունակվում է, հետևապես և՛ տեսական է, հաճախ սովորական ու կրկնական։ Սուրբայերի մեջ առաջ է եկել առարկայի շատի գաղափարից բայի գործողության շատի գաղափարի (այն է՝ տեսականության կամ կրկնության) փոխանցումով։ Այս փոխանցումը, ինչպես տեսնում ենք, կատարվել է շնորհիվ վրց. -օց (ադ), -ոց (-ոդ), -ը (-դ) և հյ. -աղ, -օղ, -ալ ձևա-իմաստային համարժեք երբեմնի հավաքական (կամ հոգնակի) մասնիկների, որոնք մի ընդհանուր աղբյուրից գալով և անցնելով հետագա ուրույն ուղին՝ երկու լեզվում էլ, այս կամ այն չափով, իմաստի տարբեր երանգավորումներ ու առումներ են ստացել, որով և՛ նրանք այսօր տարբերվում են իրարից։

F

I

Հարեթական ծագում ունեն նաև հյ. տր(|| եր) || ար || ր (|| է || շ) || ո մասնիկները, որոնք բոլորն էլ հոգնակի (կամ շատի) գաղափար են արտահայտում տարբեր բառաձևերում և ազգակից են սվաներեն -ար (|| ար || ար) հոգնակի մասնիկին:

Հին հայերենում բացի սովորական (քթ) հոգնակի կաղմությունից՝ եղել են նաև՝ -ե+ար, -նե+ար կաղմություններ, այսպես օր. բան-ե+ար «բաներ», վան-ե+ար «վանքեր», վանականներ», բարձկ-նե+ար «փոքրիկ բարձեր», քաղաքկ-նե+ար «փոքրիկ քաղաքներ»... և այլն: Այսպիսի գեղ-քերում բաղադրյալ են -ե+ար (< *ի+ար) և -նե+ար (< *նի+ար) հոգնակի մասնիկները, որոնց երկրորդ մասը, ինչպես տեսնում ենք, -ար է, որով սովորաբար միավանկ բառերից Ազուլիսի բարբառում՝ հոգնակի է կաղմություն, այսպես օր.՝ տոն-ար «տներ», շոն-տոն «շներ», ծակ-տր «ծակեր», ծոռ-ար «ծռուներ», հաց-տր «հացեր»... և այլն (ինչպես այդ սվաներենում է): Սրա մյուս փոփոխակն է հյ. ար || ր (|| ո) մասնիկը, որով նույնպես (ուրիշ մասնիկներին բաղադրյալ ձևով) հոգնակի կաղմություններ ենք ունեցել հայերենում (օր. գրաբարում), այսպես՝ կալ-որ+այ «կալեր», արտ-որ+այ «արտեր», վան-որ-այ «վանքեր», դաշ-որ+այ «դաշտեր»... և այլն, ինչպես նաև (ժողովրդական լեզուներում)՝ գեղ-որ+են+ք || գեղ-որ+ան+ք «գեղեր», տեղ-որ+են+ք || տեղ-որ+ան+ք «տեղեր», գեղ-որ+են+ք || գեղ-որ+ան+ք «գեղեր»... և այլն, և այլն:

Այս հոգնակի մասնիկները՝ ար || ր (|| ո)՝ հայերենում անուններից, ըստ իս, անցել են նաև բայաձևերին (վերջիններիս ձևավորման պրոցեսում)՝ և ստացել իմաստային որոշ երանգավորումներ: Այս անցումը կատարել են նրանք ոչ միայն հայերենում, այլև քարթական լեզուներից, օր.՝ սվաներենում:

Հայերենում, օր.՝ նախ եղած պետք է լինին, այսպես ասած, զիլ և զլ-որ բառաձևերը և ապա՝ սրանցից (բայավերջավորությունների առաջացման հետ միասին) կազմվել են, անշուշտ, զլ-ել (թավալել) և զլ-ար-ել («շատ թավալել») բայաձևերը. այսպես նաև՝ նախ* բինդ և բնդ-որ և ապա՝ բնդ-ել («խոշոր կարել») և բնդ-ար-ել (առաջնի կրկնակումը). նախ* կարկատ և կարկատ-ար և ապա՝ կարկատ-ել և կարկատ-ար-ել («շատ բաները կարկատել»), ինչպես նաև՝ պաշ-ել—պաշ-պշ-ել պաշ-պշ-ար-ել («շատ պաշպշել»), ծակ-ել—ծակ-ծկ-ել || ծակ-ծկ-ար-ել, խանձ-ել—խանձ-մնձ-ել խանձ-մնձ-ար-ել, դադ-ել—դադ-դդ-ել || դադ-դդ-ար-ել... կամ էլ կապ-ել—կապ-ր+տ-ել, ամպ-ել—ամպ-ր+տ-ել, թարախ-ել—թարխ-ր-ել... ճանկ-ել—ճանկ-ռ+տ-ել, զոկ-ել—զոկ-ռ+տ-ել, քանդ-ել—քանդ-ռ+տ-ել... խառն-ել—խառն-շ+տ-ել (< *խառն-ր+տել ձևից), պաղ-ել—պաղ-շ+տ-ել (< *պաղ-ր+տել ձևից) կամ՝ պաղ-շ+կ-ել (< *պաղ-ր+կ-ել ձևից)... և այլն, և այլն:

Այս բոլոր գեղքերում էլ՝ (առ ||) ար || ր (|| ո || շ) բայաձևանցները հայերենում, որ գալիս են, անշուշտ, անունների նույն ար || ր հոգնակի մասնիկներից, ձևական որոշ փոփոխություն հետ միասին կրել են նաև իմաստի այս կամ այն չափի տարրերակում, հատկապես առարկայի շատի

¹ Տե՛ս՝ Հ. Աճառյան, Քննություն Ազուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 169—175:

զաղափարից նրանք անցել են նախ՝ սուբյեկտի և օբյեկտի (որպես առարկաների) հոգնակիությանը և ապա՝ զործողության, այսպես ասած, շատի զաղափարի (այն է՝ զործողության կրկնությանը, սաստկությանը կամ տեսականությանը)։

Հյ. հիշյալ մասնիկները ծաղւմար հարեթական և ազգակից՝ լինելով սլաներին միևնույն - Խը մասնիկին՝ սա ևս անուններից անցել է, իմ կարծիքով, բայերին։ Միևնույն - ար || -ըր հոգնակի մասնիկը սլաներինում հանդես է գալիս թե անունների և թե բայերի մեջ (ցույց ապով օբյեկտի հոգնակիությանը, զործողության հաճախակիությանը և սաստկությանը), այսպես օր.՝ սլաներին բայերից՝ ԼոցՅ-ց (լիզ-հ) նշանակում է «թողնել», բայց՝ ԼոցՅ-ճ-ց (լիզ-հ-ըր-հ < *լիզ-ար-հ ձևից, անշուշտ)՝ «շատ թողնել, շատերին թողնել»։ Լոծս-ո (լիզ-ի) նշանակում է «ուղարկել», բայց՝ Լոծճ-ճ-ց (լիզ-ըր-է < *լիզ-ար-է)՝ «շատերին ուղարկել»... և այլն¹։

Գ

Մի աղբյուրից են գալիս նաև հյ. Խն || ց, Խն-ի || ց-ի կամ-հ+ան (|| -հն) և վրց. -ճ (-ն) մասնիկները. սրանք բոլորն էլ հոգնակի զաղափար են արտահայտել (ու արտահայտում) ինչպես հայերենում, այնպես էլ վրացերենում։ Այդպիսի օրինակներից են՝ ձի-ան = վրց. ցեցճ-ճ-ո (ցխն-ց-ի = «ձիեր»), իշ-ան || իշ-հ+ան = վրց. վիր-ն-ի «էջեր», խոզ-հ+ան = վրց. զոր-ն-ի «խոզեր», գլխ-հ+ան = վրց. թավ-ն-ի «գլուխներ»... ավագ-Խն+ի = վրց. ուվրոս-ն-ի «սեծեր», աղքատ-ան+ի = վրց. ալքատ-ն-ի «աղքատներ», կրակ-Խն+ի = վրց. ցեղխ-ն-ի «կրակներ», պտղ-ն+ի = վրց. նաղոփ-ն-ի «պտուղներ», պատճառ-ն+ի = վրց. միղեղ-ն-ի «պատճառներ»... և այլն։

Հոգնակի այս մասնիկները մի ժամանակ անուններից անցել են բայերին և իմաստի տարրեր երանդներ ստիկ։ Հին հայերենում (զրարարում) անունների «ան» մասնիկն անունների հոգնակի զաղափարից անցնում է բայի ցույց տված զործողության տեսականությանը, և նա հատկապես հանդես է գալիս այնպիսի բայաձևերում, որտեղ զործողությունը սկսված՝ շարունակվում է (օր.՝ ներկայում, անցյալ անկատարում և այլն, իսկ անցյալ կատարյալում արդեն նա դուրս է ընկնում), ինչպես օր.՝ տես-Խն-իմ, տես-ան-ի (=*տեսնում եմ, տեսնում էի*), բաձ-ի՞ տես-այ. դա-աս-ոս, դա-աս-էի, բայց՝ դա-այ. հաս-Խն-իմ, հաս-ան-էի, բայց՝ հաս-այ... և այլն։

Հետաքրքրական է, որ զրարարում միևնույն բայի կրկին ձևերը կան, մեկը սովորական, իսկ մյուսն, ըստ երևութի, ավելի տեսականության ցույց տվող ձևեր, ինչպ. օր.՝ անձկ-ամ || անձկ-ան-ամ, ցանկ-ամ || ցանկ-Խն-ամ, տենչ-ամ || տենչ-ան-ամ, ներկ-իմ || ներկ-ան-իմ, գատ-իմ || գատ-Խն-իմ, դիզ-իմ || դիզ-ան-իմ, հերձ-իմ || հերձ-ան-իմ, դերձ-իմ || դերձ-Խն-իմ... և այլն։

Սա այնպիսի կենսունակ ածանցներից չէ, ինչպես օր.՝ դիս այսօր էլ՝ -ատ || -ատի, -ատ || -ատի, -տ || -տի, -որ || -ր և այլ նման բայածանցները, որոնք իրենց սկզբնական հոգնակի իմաստի տարրեր երանգավորումներով հանդերձ՝ դիս այսօր էլ շատ մոտ են անունների միևնույն մասնիկներին։ Սա

¹ Այս սլան. օրինակները բերում եմ Ն. Մառի К вопросу о положении абхазского языка среди афетических. С.-Петербург, 1913—16, որտեղ այս երևույթը սլաներենում նկատել է Ն. Մառը։

(«առն» ածանցյալ), ըստ երևույթին, ափիլի հին ու իր (սկզբնական) իմաստը միադնած ածանց է, որը զրաբարից աշխարհարարին անցած բայաձևերում իր ձևական փոփոխությունն էլ է կատարել, ինչպ. օր.՝ տես-ան-եմ > տես-ն-եմ, գտ-ան-եմ > գտ-ն-եմ, հաս-ուն եմ > հաս-ն-եմ... և այլն: Բայց չնայած սրան՝ աշխարհարարում նա գլխավորապես անուններից բայ է շինում և ցույց է տալիս՝ գործողության տևակետայնությունը, սլոգան, մի վիճակից մյուսին անցնելը, ինչպ. օր.՝ ձի-ձի-ան-ձի-ուն-ալ, էշ-իշ-ուն-իշ-ուն-ալ, այսպես նաև՝ քար-ուն-ալ, կարճ-ան-ալ, մի-ան-ալ, լո-տո-ալ... և այլն: ¹

Սրա ձևա-իմաստային համարժեքը վրացերենում, ինչպես կտեսնենք, շատ ափիլի մոտ է կանգնած անունների նույն հոգնակի մասնիկին: Հին վրացերենի հոգնակի մասնիկն է -ն- (-ն), օր.՝ յոթն-ո (ցրեմ-ի = արցունք) բառի հոգնակին է յոթն-ն-ո (ցրեմ-ն-ի = արցունքներ): Թմա-յ «մազ» բառի հոգնակին է՝ թմա-ն-ի «մազեր, մազախ», քոչոր-ի «գանդուր» բառի հոգնակին է՝ քոչոր-ն-ի «գանդուրներ, գանդուրի» և այլն:

Հին վրացերենում հիշյալ -ն- (-ն) հոգնակի մասնիկը հանդես է գալիս անցողական բայերի որոշ ժամանակներում և ցույց է տալիս, որ ենթական իր գործողությունը կատարում է շատ կրող խնդիրների նկատմամբ, ինչպ. օր.՝ լո-ո-յո-ո (դա-ի-ճր-ա) վրացերենում նշանակում է (իր կամ իրեն համար ինչ-որ բան) «կտր-եց» (օր. վրց. թմա-յ դա-ի-ճր-ա = «իր մազը կտրեց»), իսկ լո-ո-յո-ն-ո (դա-ի-ճր-ն-ա)՝ կտր-ա-եց (օր. վրց. թմա-ն-ի դա-ի-ճր-ն-ա = «իր մազերը [մազ-ուն] կտր-ա-եց»): այսպես նաև՝ վրց. դա-դա-ու-շալ-ա «բույ-եց», բայց՝ դա-դա-ու-շալ-ն-ա «բաց-ու-եց» (օր. վրց. քոչոր-ն-ի դա-դա-ու-շալ-ն-ա «ներա գանդուրները [գանդուր-ուր] բաց-ու-եց»): վրց. մո-ի-ծուր-ա «սրբ-եց», բայց՝ մո-ի-ծուր-ն-ա «սրբ-ու-եց» (օր. վրց. ցրեմ-ն-ի մո-ի-ծուր-ն-ա «իր արցունքները [արցունք-ուր] սրբ-ու-եց»)... և այլն, և այլն:

Հայտնի է, որ երկակի թվի գաղափարը հայերենում զրահորվել է որոշ պեպքերում -ուի (|| -վի) հոգնակի մասնիկով, որպ. օր.՝ ոտ-ուի (|| ոտ-վի), ձեռ-ուի, աչ-ուի, դո-ուի... և այլն: Սրանք երկակի կամ ընդհանրապես հոգնակի ձևեր են: Այսպես օր.՝ «սա-ուի» ասելով «աչքեր» է հասկացվել, իսկ «սեռ-ուի»՝ բնականորեն «սեռ աչքեր», ինչպես նաև՝ «ն-ուի» = «հոնքեր», իսկ սե ընք-ուր = «սե հոնքեր», շրթ-ուի = «շուրթեր», իսկ վարդ-շրթ-ուի = «վարդ շուրթեր», մատ-ուի = «մատներ», իսկ ոսկեմատ-ուի = «ոսկեմատներ», դո-ուր = «դռներ», իսկ մեծդո-ուի = «սոս դռներ»... և այլն:

Բայց միևնույն հոգնակի «սեռ-ուի» բառածևը կարող է նաև հատկանշի դերում էլ հանդես գալ, ինչպ. օր.՝ «սեռ-ուի» աղջիկ» արտահայտություն մեջ: Այստեղ սկզբնական «սեռ աչքեր» նշանակող առարկայի հոգնակի գաղափարից, ինչպես երևում է, անցնում-դառնում է «սեռ աչքերով» կամ «սեռ աչքեր ունեցող» մի այլ առարկայի հատկանիշ,² ինչպես

¹ Վերահիշյալ «առն» բայաձևերի երբեմնի հոգնակի մասնիկ լինելու մասին, ըստ իմ ճիշտ է նկատել զեկա. Պարիբյանը իր «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները...» փոքրիկ տշխատության մեջ (նույնը՝ 1937 թ. Նրա Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» գրքի մեջ, էջ 97—98):

² Առաքելայի գաղափարից մի այլ առարկայի հատկանշի գաղափարի անցումը հայերենում կատարվում է նաև եղակիով, այսպ. օր.՝ «ուսկի» ասելով մենք հասկանում ենք

նուն՝ սերնք-ուի (որ՝ սսերնք-ուի առհես) արտահայտության մեջ՝ «սս հոնքերով» կամ «սս հոնքեր ունեցող»։ վարդըթ-ուր = «վարդ շուրթերով» կամ «վարդ շուրթեր ունեցող»։ ոսկեմատ-ուի = «ոսկե մատներով» կամ «ոսկե մատներ ունեցող»։ մեծղու-ուի = «մեծ զոններով» կամ «մեծ զոններ ունեցող»... և այլն։

Այս -ուի մասնիկի նման՝ -անի մասնիկն էլ, որ հնում (որ՝ դարարում) հոգնակի գաղափար է արտահայտել, ինչպ. օր գրակ-ասր գրականեր, գլխ-ասր գլուխներ, առած-ասր ասածներ, աթոռ-ունի աթոռներ, կմբեթ-ունի կմբեթներ, փող-ասի փողեր, գանդակ-անի գանդակներ... և այլն, ինչպես երևում է, իմաստային հույն անցումն է կատարել (որ՝ երբ ասում ենք «գլխ-անի», այսօր մեր գրական հայերենում այլևս «գլուխներ» չենք հասկանում, այլ սովորաբար «գլուխներով» կամ «գլուխներ ունեցող»... մի բան (ասենք՝ առասպելական դե, օր՝ «յոթը գլխանի դե» արտահայտության մեջ), ինչպես նաև՝ աթոռ-ունի = «աթոռներով» կամ «աթոռներ ունեցող»։ կրակ-ունի = «կրակներով» կամ «կրակներ ունեցող»։ տոռ-ունի = «փողերով» կամ «փողեր ունեցող»... և այլն։ Այլև սրանց նմանությամբ՝ ճյուղ-ունի, անկյուն-անի, ոտ-ունի, թև-ունի, մաղ-ունի, խոտ-ունի, տերև-անի, լար-ունի, տիղ-ունի, նազ-ունի, դեղ-ունի... և այլն¹։

Այս տեսակետից շատ յուրահատուկ են -եան մասնիկի իմաստային անցումները. այս մասնիկը ևս հնում (որ՝ դարարում) հոգնակի է նշանակել, ինչպ. օր՝ փող-եան փողեր, գր-եան գրեր, գլխ-եան գլուխներ, թղթ-եան թղթեր, մորթ-եան մորթեր... և այլն։ Սրա ձևա-իմաստային («իան») համարժեքն էլ վրացերենում սկզբնական՝ առարկայի հոգնակի գաղափարից կատարել է առարկայի հատկանշի իմաստային անցում, օր՝ վրց. მსხალ-ი (մսխալ-ի = տանձ) բառից նույն մասնիկով կազմված է მსხალ-იან-ი = (մսխալ-ի-ան-ի նախ՝ տանձի-ք և ապա՝ տանձ-ուտ՝ «տանձի-ներով առատ տեղ» նշանակությամբ)։ այսպես նաև՝ վրց. վաշ-ի «խնձոր» բառից՝ վաշ-ի-ան-ի (նախ՝ խնձորի-ք և ապա՝ խնձոր-ուտ = «խնձորներով առատ տեղ»), վրց. կղ-ե «ժայռ» բառից՝ կղ-ի-ան-ի (= նախ՝ ժայռ-ք և ապա՝ ժայռ-ուտ)։... և այլն։ Այսպես նաև հյ. «փող-եան» բառաձևը սկզբնական «փողեր» հոգն. գաղափարից անցել է «փողերով» կամ «փողեր ունեցող» նշանակությամբ մի այլ առարկայի հատկանշի (օր՝ «երկփող-եան հրացան» վրց. «օրլուլ-ի-ան-ի թոփի» արտահայտության մեջ, որտեղ երկու լեզվում էլ, միևնույն «եան || -ի-ան» հոգնակի մասնիկի իմաստային նոր անցման շնորհիվ ցույց է տրված հրացանի հատկանշի բերկու փողերով կամ «երկու փողեր ունեցող» նշանակությամբ)։ Այսպես նաև՝ հնագր-եան = վրց. «ձվեղնուսխ-ի-ան-ի» նախ նշանակել է «հին գրեր» (հոգն.) և ապա՝ «հին գրերով» կամ «հին գրեր ունեցող»... (օր՝ «հնադու-եան մատիան» = վրց. «ձվեղնուսխ-ի-ան-ի մատիան»)։ բազմաղլխ-եան = վրց. «մրավալթավ-ի-ան-ի»

առարկա (— մեծագույն գոյական անուն), բայց ըստի մարդ արտահայտության մեջ արդեն — հատկանիշ. այսպես նաև՝ Լուս և Լուս սիրտ, Սլա և Սլա մարդ, Կին և Կին մարդ, աղև և աղև օր և այլն։

1 Դեկտ. Հարիրյանը այս մասնիկի մասին հետևյալ դիտողությունն ունի՝ «Այն հոգնակի կազմող ածանցով դարարում ունենք մի շարք բառեր... աշխարհաբար հայերենում ընդունված է և գործածական ունի ածանցը, որ նշանակում է մի հատկությունից կամ մի բանից շատ ունեցող՝ օր՝ լեզվ-անի, գեղ-անի, մորթ-անի, Դործ-ծվում է նաև թվականի հեռ. երկու դոն-անի, հինգ աչք-անի, երկու գլխ-անի և այլն» (Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937, էջ 99)։

նաև նշանակել է շատ պլուխներ և ապա՝ շատ զլուխներով՝ կամ շատ պլուխներ ունեցող... (օր.¹ Բրազմադլի-եան վեպեր)։ Բուկեթիթ-եան վրդ. օքրոս փոթի-իան-ի» նախ նշանակել է «սուկե թղթեր» և ապա՝ «սուկե թղթերով» կամ «սուկե թղթեր ունեցող»... և այլն։ Սրանց նմանությամբ նաև բազմադար-եան վրդ. «մրավալսառեկի-իան-ի», բուր-եան = վրդ. «սուր-նել-իան-ի», բազմուտ-եան վրդ. «մրավալսառ-իան-ի», վարդաշրթ-եան = վրդ. «վարդիսառեկ-իան-ի»... և այլն։

Իմաստային այս անցման հետ միասին, իմ կարծիքով, երկու լեզվում էլ հիշյալ մասնիկը կատարել է նաև իր ձևական փոփոխությունը, հայերենում՝ «ևան > եան (> յա. ն > յ)», իսկ վրացերենում՝ «-իան > -իա (հն-ի կորուստով) > ա փոխանցումով» Այսպես օր.² սեաչ-եան վրդ. «շավթվալ-իան-ի» ձևից, բոս իս, ստացված պետք է լինի հյ. «սեաչ-եան» (> սեաչ-յա) և վրդ. նախ՝ «շավթվալ-իան» և ապա՝ «շավթվալ-ու»։ Երկրորդ-եան վրդ. «օրտոտ-իան-ի» ձևից՝ հյ. երկրորդ-եան (երկրորդ-յա) և վրդ. օրտոտ-ու > օրտոտ-ա. մորթ-եան վրդ. «աղ-ավ-իան-ի» ձևից՝ հյ. մորթ-եան և վրդ. աղ-ավ-իան > աղ-ավ-ա. փող-ուան վրդ. «լուլ-իան-ի» ձևից՝ հյ. փող-եան և մաս. տու-իան > լուլ-ա. դլի-եան վրդ. «թավ-իան-ի» ձևից՝ հյ. դլի-եան և վրդ. թավ-իան > թավ-ա. ոտ-եան = վրդ. «փեխ-իան-ի» ձևից՝ հյ. ոտ-եան և վրդ. փեխ-իան > փեխ-ա... և այլն։

Ինչպես երևում է մեր բերած օրինակներից, «ուի», «անի» և «եան» հոգնակի ձևերից փերջին երկու «անի» և «եան» (վրդ. «իան») մասնիկներն են, որ լիովին իմաստային անցում են կատարել առարկայի հոգնակի դադափարից դեպի առարկայի հատկանշի պաշարարը։ Եվ ընդհակառակը՝ դա մասամբ է կատարված «ուր» հոգնակի մասնիկավոր ձևերում, ինչպես այդ, օր., «ք» մասնիկի դեպքերում է գրաբարում (տեղանունների մեջ)։ Այսպես օր.³ տանձի-ք (տեղանունը) նախ նշանակել է «տանձիներ» (հոգն.) և ապա՝ «տանձիներով առատ տեղ» (= տանձ-ուտ)։ Խնձորի-ք (տեղանունը) նախ՝ «խնձորիներ» և ապա՝ «խնձորիներով առատ տեղ» (= խնձոր-ուտ)։ Գոմ-ք (տեղանունը) նախ՝ «գոմեր» և ապա՝ «գոմերով առատ տեղ» (= գոմ-ուտ)։ Եյր-ք՝ նախ «այրեր» և ապա՝ «այրերով տեղ»... ինչպես նաև՝ «ցծ» (-եր) հոգնակի մասնիկով վրացերենում՝ Ձեկ-ցծ-ո (ձախ-ի-ի = նախ՝ տանձի-ք, տանձի-ներ և ապա՝ տանձ-ուտ), ջաժ-ցծ-ո = (վաչ-եք-ի = նախ՝ խնձորի-ք, խնձորի-ներ և ապա՝ խնձոր-ուտ), ծոկ-ցծ-ո (բու-եր-ի = նախ՝ գոմ-ք, գոմ-եր և ապա՝ գոմ-ուտ)... և այլն։

Նույնը նաև որոշ կարգի տեղանունների մեջ (այսպես առած՝ ցեղանուններից անցած), որտեղ դրր. «ք» մասնիկի իմաստային համարժեքը վրդ. «ցծ» (-եթ) հոգնակին է։ Այսպես օր.⁴ Հայ ք = վրդ. Լոմ-ցծ-ո (Սոմ-եթ-ի) նախ նշանակել է «հայեր» (հոգն.) և ապա՝ «հայերով բնակված տեղ» (= Հայաստան)։ Հույն-ք = վրդ. Ճըմ-ցծ-ո (Բերձն-եթ-ի)՝ նախ «հույներ» և ապա՝ «հույներով բնակված տեղ», Սվան-ք = վրդ. Նվան-ցծ-ո (Սվան-եթ-ի)՝ նախ «սվաններ» և ապա՝ «սվաններով բնակված տեղ»... և այլն։

¹ Վրդ. «իան» երկրորդադարի առաջին կեսից է (դառնալով «ա»), որ սովորական է վրացերենում՝ նման մոդ. հայերենի երկրորդադարի պարզագույնը (օր.² երկաթ-եան > երկաթ-է) փայտ-եան > փայտ-է... Կարգան-եան-ք > Կարգան-ան-ք. Դրիգոր-եան-ք > Դրիգոր-ու-ք... և այլն)։

² Սրա հակառակ երևույթ էլ կարելի է գտնել լեզվի մեջ, ինչպ. օր.³ «ստան» մասնիկը, որ պարսկերենում «տեղ» է նշանակել, հայերենում տեղի դադափարից անցել է

Այս բոլորից հետո դժվար չէ կոտհել, որ հոգնակի մասնիկներն իրենց իմաստային ունցումներով՝ հիմնականում զրահորելով մի բանով առատ այս կամ այն առարկայի հատկանիշը՝ ի վերջո կարող են առաջ բերել ու զարդացնել նաև մի նոր ֆունկցիա, այս անգամ արդեն առարկայի հատկանիշից՝ զործիական հսկովի ֆունկցիանով¹։

Հայտնի է, որ «աւ» մասնիկը զրահարում զործիական հսկովի ձևանիշներից մեկն է։ Բայց սա ծագումով, ինչպես կահանենք, երբեմնի հոգնակի մասնիկներից է, որ, այս կամ այն չափով, պահպանված է ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն մի շարք բառաձևերում (զլխավորապես տեղանունների մեջ)։

Ինչպես արդեն նշեցինք, զրբ. հոգնակի «է» մասնիկը հնում, տեղի դադարաբար արահայակու տեսակետից, համապարհ էր վրց. -ցտ (-եթ) մասնիկին, ինչպ. օր.² Հայ-է = վրց. եթ-ցտ-ո (Սոմխ-եթ-ի), Կախ-է = վրց. Կախ-եր-ի, Ջավախ-է = վրց. Ջավախ-եր-ի, Թուրք-է = վրց. Թրխալ-եր-ի, Բուզար-է = վրց. Գուդար-եր-ի, Գժոխ-է = վրց. Գջոխ-եր-ի... ինչպ. նաև՝ Թեղի-է = վրց. Թեղ-եր-ի³։

Պարզ է, որ հյ. թեղի-է տեղանունը, որպես հոգնակի բառաձև, նախ «թեղիներ» է նշանակել և ապա՝ «թեղիներով առատ վայր» (= թեղ-ուտ)։ Նույնը նաև սրա ղուդակից վրց. Թեղ-եր-ի-ն, որ նշանակել է նմանապես, որպես հոգնակի բառաձև, նախ «թեղիներ» և ապա՝ «թեղիներով առատ վայր»։

Սրա երկրորդ ձևն է նույն վրացերենում տղ-աց-ո (Թեղ-ավ-ի)։ Սա էլ իր հերթին տեղանուն է՝ նույն նշանակությամբ, ինչ որ առաջինը՝ թեղ-եր-ի (= թեղի-է)։ Սրանց տարբերությունը (վրացերենում) -ցտ (-եթ) և -աց (-ավ) մասնիկների մեջ է։ Սրանք՝ երկուսն էլ երբեմնի հոգնակի (կամ համաքական) մասնիկներ են և համապարհ են հյ. «է» մասնիկին (կամ «ուտ» համաքականին)։

Իրենույն -աց (-ավ) մասնիկով վրացերենում պահպանված են մի շարք տեղանուններ, ինչպ. օր.⁴ Ձճ-աց-ո (Ման-ավ-ի = Յից-է, Օց-ուտ), Ձժ-աց-ո (Մուխավ-ի = Կալնի-է, Կալն-ուտ), Ժժ-աց-ո = (Ջիր-ավ-ի = Տակ-ու-է, Տակ-ու-ուտ), Ձուլ-աց-ո (Մուլ-ավ-ի = Դալար-է, Դալար-ուտ), Զուլ-աց-ո (Բուդ-ավ-ի = Բուդ-ուտ), Ծուլ-աց-ո (Փիտ-ավ-ի = Փիտ-ուտ), Եթ-աց-ո = Լեվի-ավ-ի (Ափխ-ուտ)... և այլն⁵։

Հոգնակիության գաղափարի. օր.⁶ «Հայ-է» բառի կողքին գործ է ածվել նույն (զրահարում) նաև «Հայ-ա-սան» (միևնույն տեղի իմաստով) որի նմանությունը՝ ծառ-է և ծառ-ա-սան (— ծառ-ուտ՝ «ծառերով առատ տեղ» իմաստով), այդի-է և այդի-սան (— այդ-ուտ՝ «այդիներով առատ վայր»։ այլև՝ յեռն-ա-սան, մեռլե-սան, ծաղկ-ա-սան, վարդ-ա-սան... և այլն)։

¹ Ձև որ զործիական հսկովն էլ հանախ կարող է մի առարկայից մի այլ առարկայի հատկանիշը ցույց տալ, ինչպ. օր.⁷ հաց — հաց-ով և հաց-ով մարդ, հասակ — հասակ-ով և հաց-ակ-ով մարդ, գործ — գործ-ով և գործ-ով մարդ... և այլն։

² Այս տեղանունը, ինչպես նաև՝ Կարթ-է վրաց Կարթ-եր-ի ձևերը իրար համադրել է պրոֆ. դոկտ. Նարիթյանը իր «Հ. յեզ. առամ. ներած.» գրքի մեջ (էջ 63), իսկ 193 լիցում գրում է. «Հայտնի է, որ ժողովուրդը իր անունը գործ է ածում հոգնակի առումով, որ և հանդիսանում է իր երկրի անունը։ Այս շատ ակնհայտ է երևում հայերենում, որ Հայկ նշանակում է և՛ հայեր, և՛ Հայաստան (ի Հայո), Վրկ նշանակում է և՛ վրացիք, և՛ Վրաստան, Լուլվ նշանակում է և՛ հույներ և՛ Հունաստան»։

³ Այս օրինակները քննում եմ Վախուշադի Վրաստանի աշխարհագրությունից ցանցով, Վրացի լեզվի լեզվագիտության ինստիտուտում, Թբիլ. 1941)։

Հայերենում էլ են պատահում նույն կաղմուխյուն ունեցող տեղանուններ, այսպես օր. (Լոռու գյուղերից մեկը)՝ Որդն-ալ (անշուշտ «որդուն-ք, որդն-ուտ» նշանակությամբ), Կճ-ալ (= «կիճ-ք, կճ-ուտ» նշանակ.), Մո-ալ (= «Մուր-ք, մր-ուտ» նշանակ.)... և այլն:

Երկու լեզվում էլ «-ալ» մասնիկը, ինչպես երևում է, ընդհանուր մասնիկներից է և զեռ այսօր էլ, այս կամ այն չափով, գրեթե բոլոր հոգնակի (կամ հավաքական) գաղափարը՝ իմաստային որոշ անցումով: Այսպես օր. «Որդն-ալ» տեղանունը, որպես հոգն. բառաձև, նախ պետք է նշանակեր «որդուն-ք, որդ-եր» (հոգն.) և ապա՝ «որդերով առատ տեղ» (= որդն-ուտ). Կճ-ալ՝ նախ «կիճ-ք, կճ-եր» և ապա՝ «կճերով առատ տեղ» (= կճ-ուտ). Մո-ալ՝ նախ «մուր-ք, մուր-եր» (ցեղանուն) և ապա՝ «մուրերով բնակված տեղ» (= Մոա-ստան). Թեղ-ալ՝ նախ «թեղի-ք, թեղի-ներ» և ապա՝ «թեղիներով առատ տեղ» (= Թեղ-ուտ)... և այլն¹:

Իմաստային այս անցումը զեռնա հնում այնքան ուժեղ է կատարվել «-ալ» մասնիկի մեջ, որ առարկայական հոգնակի գաղափարից ի վերջո անցնելով առարկայական հատկանշի՝ դրաբարում արդեն հանդես է գալիս այս նոր որակով, այն է՝ գործիական հոլովի ֆունկցիայով: Այսպես օր. «Թեղ-ալ» բառաձևը սկզբնական «թեղի-ք, թեղիներ» (հոգն.) գաղափարից իմաստային հետևյալ հիմնական անցումները պետք է կատարեր՝ նշանակելով նախ նույն կոնկրետ հոգնակի «թեղիներով (առատ) վայր» (= թեղ-ուտ) և ապա՝ «թեղով (մի բան)» եզակի գաղափարը. այսպես նաև՝ Կճ-ալ՝ «կիճ-ք, կճ-եր» (հոգն.) գաղափարից՝ նախ «կճերով վայր» (= կճ-ուտ) և ապա՝ «կճով (մի բան)» եզակի գաղափարը: Որդն-ալ՝ «որդուն-ք, որդեր» (հոգն.) գաղափարից՝ նախ «որդերով վայր» (= որդն-ուտ) և ապա՝ «որդով (մի բան)» եզակի գաղափարը... Այնուհետև սրանց նմանությունը նաև՝ աշխարհ-ալ, տիտան-ալ, խել-ալ, մտ-ալ, կանխ-ալ, իր-ալ, բն-ալ... և այլն:

Նույնը կարելի է տեսնել նաև «ալ» մասնիկի հնչյունային մյուս տարբերակի՝ «-ալ» մասնիկի կապակցությամբ էլ: Սա էլ, առաջինի նման, նույնպես գործիական հոլովի ձևանիշ է դարձած հայերենում, ինչպ. օր.՝ ստոր-ալ, միջ-ալ, վեր-ալ... և այլն: Վրացերենում, սակայն, նույնը սովորական հոգնակի մասնիկներից է՝ -ევი (-եվ) || -ებ (-եբ) փոփոխականներով, ինչպ. օր.՝ მსხლ-ევი-ი (մսխլ-եվ-ի) || მსხლ-ებ-ი (մսխլ-եբ-ի = «տանձի-ք, տանձի-ներ, տանձ-ուտ» նշանակությամբ), ვაშლ-ევი-ი (վաշլ-եվ-ի) || ვაშლ-ებ-ი (վաշլ-եբ-ի = «խնձորի-ք, խնձորի-ներ, խնձոր-ուտ»), (ბოსლ-ევი-ი) || (ბოსლ-ებ-ი) (բոսլ-եբ-ի «Գոմ-ք, գոմ-եր, գոմ-ուտ»), ძეგლ-ევი-ი (ձեղլ-եվ-ի) || ძეგლ-ებ-ი (ձեղլ-եբ-ի = «Արձան-ք, արձան-ներ, արձան-ուտ»), ქვაბ-ევი-ი (քվար-եվ-ի) || ქვაბ-ებ-ი (քվար-եբ-ի = «այր-ք, այր-եր, այր-ուտ»)... և այլն:

¹ Այս «-ալ» մասնիկը, ըստ իս. արևել. -wa հոգն. մասնիկի մի տարբերակը պետք է լինի, այսպես օր.՝ aqʷs-wa «արխագներ», aqʷl'-wa «քարթներ, վրացիներ», aqr-wa «մեղ-րեղներ» (որինակները բերում եմ ն. Մառից): Արևել. -wa հոգն. մասնիկը, ըստ Լեռնաթին, w + an բաղադրյալ մասնիկներից է կաղմված և նույն է հյ. վ + an հոգն. բաղադր. մասնիկի հետ, ինչպ. օր.՝ իշ-վ + an «էշեր», հոգ-վ + an «հողեր», տոգ-վ + an «տեղեր»... և այլն: Ն. Մառը արևել. -wa հոգն. մասնիկը տեսած է համարում հյ. -վ || -ի մասնիկի, որ խորհրդանշում է որոշ հոգնակի ցեղանունների մեջ՝ ա) ծան-ի, ճան-ի, բ) գաղ-ի, լաղ-ի և գ) Նդ-ի-ի «Միջերկրյան»... և այլն (Н. Марр. К вопросу о положении абхазского языка среди «фетических». С.-Петербург, 1912. էջ 16—17):

Հակառակ «-աւ», «-եւ» մասնիկներին՝ սրանց մյուս տարրերակը («-իւ» մասնիկը) վրացերէնում էլ մի ժամանակ, որոշ չափով, գործիական հոլովի փոփոխութիւն է հանդէս եկել տարրեր բառաձեւերում, ինչպ. օր.¹ վրց. ժաղ-ո (ձալ-ի=ուժ) բառից՝ ժղ-ոց (ձլ-իւ=«հաղ-իւ» նշանակութեամբ), վրց. մխար-ի «ուս, կողմ» բառից՝ մխր-իւ (|| մխր-իւ=կողմ-ու), վրց. կութի-ի «անկյուն» բառից՝ կուժի-իւ «անկյուն-ով», նույն ձևով նաև՝ վրց. ամփր-իւ «այսպիս-ով», սիգմր-իւ «երազ-ով», մթլ-իւ «լը-իւ», ամրոց-ով+ին», դամ-իւ «գիշեր-ու», ինչպէս այդ մի ժամանակ հայերէնում էր (գրաբարում), օր.² խստ-իւ, հշտ-իւ, յր-իւ, հաղ-իւ, աղն-իւ, այնուամենայն-իւ... և այլն³։

